Սիդոն, և յԵրուսաղէմ, և Հայք պահեցին զհրովարտակն իւրեանց, զի ակն ունէին տալ փոխել զայն 'ի հասանիլ հրովարտակացն յԵրուսաղէմ ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Ատելութիւն Յունաց յԵրուսաղէմ։ Կուսակալ Դամասկոսի ։ Շինութիւն Ս. Գերեզմանին ։ Մղըզի զօրք և Ենիչէրիք ։ Խռովութիւն 'ի մէջ զօրաց ։ Վանք Ս. Փրկչի ։ Ժողով 'ի գաւառին վասն շինութեան Ս. Յարութեան ։ Գործ զօրավարին Ապուզուրեան ։

Մինչդեռ այսպիսի դատաստանական գործով ըզբաղեալ էին Հայք 'ի Կոստանդինուպօլիս 'ի Դուռն, Յոյնք յԵրուսաղէմ սկսան յորդորել զհապէշս լինել հետևող ինքեանց՝ և խոստանային տալ նոցա կերակուր ըստ սովորութեան Հայոց, այլ նոքա ետուն պատասխանի, եթէ հասանիցի մեզ սովամահ լինել, ոչ ընդունիմք զկերակուր ձեր, մեք զՀայս գիտեմք և ոչ բաժանիմք 'ի նոցանէ մինչև ցմահ ։ Յոյնք որսացին զմին յեկեղեցականացն Ղպթոց, և ետուն նմա գրել առ Պատրիարքն և առ ազգն նորին յԵգիպտոս, թէ Յոյնք տիրեցին Ս. Տեղեաց, և խնդրեն զմեզ լինել հետևող ինքեանց· բայց Պատրիարքն սաստիւ կշտամբեաց զնա, և գրեաց առ Թէոդորոս Պատրիարք գիր սիրոյ և հաստատուն միաբանութեան ։ Յոյնք սկսան յորդորել զկանայս Ղպթոց, բայց ընկալան 'ի նոցանէ պատասխանի, զոր չէ 'ի ճահ գրել աստանօր ('ի 21 Սեպտեմբերի) ։

Ի սոյն աւուրս եհաս և գիրն Ամիրայից առ Թէոդորոս Պատրիարք, յորում մխիթարէին զնա սակս նեղութեանց և տառապանաց, զոր կրէր յերեսաց թշնամեաց· ծանուցանէին նաև զմիաբան ջանս և զաշխատութիւնս իւրեանց, համակամ միութեամբ եդեալ ուխտս և դաշինս, 'ի փարատումն վշտաց՝ 'ի պահպանութիւն և 'ի պայծառութիւն սեփհականութեան ազգին, և զուրախութիւնս իւրեանց 'ի հասանիլն օրինաւոր հրովարտակաց, և յաւուրս ծոմապահութեան Տաճկաց խոստացեալ հանել զհրովարտակ